

ՍԻՐՈՅ ԾԱՂԻՆ

Երկինքի պէս կապոյտ ըլլալ կ'ուզէի
Անմատչելի ուկեաններու մէջ ցոլուն.
Ու վառէի հողիս վերեւն աշխարհի,
Սիրոյ շողեր տալու համար մարդերուն:

Տեսնէի ես թաղուն հողին բարութեան
Սեւ օրերու ըստուերներով քողարկուած,
Ու կանչէի դերդ ողջոյնի Շարական.
— Ո՛վ եղբայներ, համբոյրի ժամն է եկած:

Եւ ինչպէս մոմն ուրիշ մոմէ լոյս կ'առնէ,
Բոցանար մեր տենչն ալ տենչով իրարու.
Ամէն քերթող նոյն բանը միշտ երգած է —

Ժամն է հիմա սիրոյ ծաղիկ քաղելու.
Որ մեր վրան նայի երկինքն ասմազուն,
Երբ հողիններն են իրարու քով ժրպտուն:



ԻՆՁ ՄԻ ՓԱՏՄԷՔ

Ինձ մի՛ պատմէք ձեր Երազներն ոսկեղէն,
Բաւ են արդէն պատրանքներս,
Ես չեմ վրնար հեռանալ այս աշխարհէն,
Դիմակելով իմ աչքերս:

Հոս ամէն մարդ իր աչունին կը հասնի
Միշտ անկատար տենչերով.
« Հող պիտո՛ւ ըլլաս », նոյն ըսուեցաւ եւ ինձի.
Մի՛ խաբէք զիս երազով:

Չ'անցնիր երբեք տարի մ'առանց ձմեռուան,
Ամպերն առանց ըստուերի.
Մի՛ դընէք զիս մառախուղի զերեզման,

Գիշերն երբոր կը հասնի:
Թէ երազներն ըլլային քիչ մ'իրական,
Չէինք փոքր մենք իրարու զերեզման:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ

ՏԱՐԵԿԱՆ Բ. ԺՈՂՈՎԸ ՀԱՐՎԸՐՏ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԷՋ

Համազգային Հայագիտական Միութեան պարեկան երկրորդ համաժողովը իր տուած կարգ մը որոշումներով՝ ճամբան բացաւ յառաջիկային տեղի ունենալիք լայն գործունէութեան մը, հաստատելու համար Հայկաբանական ամսիւնն եւ հայագիտութեան կեդրոն մը, Հարվըրտ Համալսարանին մէջ:

Այս տարուան համաժողովը, որ տեղի ունեցաւ Յունիս 8-10, 1956, Հարվըրտի մէջ, զբաղեցաւ սահմանադրութեան ամփոփումով: Ժողովը վերընտրեց Հինգ քողջացմամբ: Ժողովը վերընտրեց Հինգ անդամներ եւ ընտրեց Երեք նոր անդամներ՝ Ղեկավարներու Յանձնախումբին մէջ: Ան իր տուած կարգ մը որոշումներով ծրագրեց կեդրոնացած գործունէութեան շարք մը, աչնան սկսելիք:

Համաժողովին ներկայ էին անդամներ եւ բարեկամներ՝ որոնք եկած էին հեռաւոր Անգլիայէն, Գալիֆօրնիայէն, ինչպէս նաեւ Միլուքիէն, Ուաշինկթընէն, եւ Նիւ Ինկլէնտի նահանգներէն:

Այս համաժողովին ամենադիւստր մասն էր Յունիս Տի, Ուրբաթ երեկոյեան տեղի ունեցած հաւաքովի Հարվըրտ Համալսարանի մէկ սրահին մէջ, ուր քննուած էին անցեալ տարեկան կարգ մը հարցեր՝ Հայութեան առնուեցան կարգ մը հետազոտութեան ուսման վերաբերող հետազոտութեան մարդին մէջ: Այս նիւթի մասին իրենց կարծիքները յայտնող աչքառու դիտորենց կարծիքները յայտնող Հայ ներսէս-նականներէն էին, Սիրարփի Տէր Ներսէս-Եան՝ Տրմպարթըն Օքս Հետազոտութեան կեդրոնէն, Արթըր Ճէֆրի՝ Գոլոմպիա Համալսարանէն, Գարլթըն Գուն՝ Փենսիլվանիոյ Համալսարանէն, եւ Ճաշուս Սիլվանիոյ Հարվըրտէն:

Բոլոր խօսողներն ալ շեշտեցին կարիքը հայկական ուսման կեդրոնի մը, Հարվըրտ Համալսարանին մէջ, այնպէս ինչպէս որ ծրագրուած է, եւ ապահովուելին

ներկաները, թէ ընդարձակ նոր հորիզոններ պիտի բացուին անգամ մը որ հայկական ուսման ծրագիրը հաստատուի շարունակական եւ մնայուն հիման վրայ:

Ուրբաթ երեկոյեան եւ Շաբաթ կէսօրէն ետք տեղի ունեցած նիստերուն բոլոր խօսողները արտայայտուեցան հայկաբանական ուսման լարմաթիւ կարիքներու մասին, հիմնուած իրենց մասնագիտութեանց եւ աշխատանքին վրայ: Իւրաքանչիւրը շեշտեց փոխ-յարաբերութիւնները եւ անոնցմէ ստեղծուելիք բարեկեցութիւնը, որոնք վրնան դալ կազմակերպուած, մնայուն, եւ բարձր ակադեմական ծրագրէն, հայկաբանական ուսման մէջ:

Փրոֆ. Սիրարփի Տէր Ներսէսեան կոչ ուղղեց որ վերադարձում մը ըլլայ հայկական գեղարուեստի եւ մշակոյթի մարդին մէջ, ի լոյս բերելու Հայոց գեղեցիկ աւանդութիւններն ու նպաստները աշխարհի արուեստին: Փրոֆ. Ճէֆրի մեղադրեց պակասը բաղմաթիւ արժէքաւոր Հայ կրթնց արուեստի հրատարակութեանց կրօնական գործերու հրատարակութեան եւ թարգմանութեան: Նա աւելցուց թէ «Քրիստոնէական մտածողութեան եւ գործունէութեան պատմութեան համար տակաւին մեծ նպաստներ կան, որ կրնան յառաջանալ լաւ կազմակերպուած հայկաբանական ուսման ծրագրէ մը»: Փրոֆ. Ուաթմոյ, որպէս լեզուագիտութեան հրմուտ մէկը, անգամ մը Եւս շեշտեց կարիքը շարունակելու հետազոտութեան լեզուի ուսման մէջ, եւ պատրաստութեան նր համար անմիջական կարեւորութիւններ կայացնող արդիական մեթոտներով յօրինուած քերականութեանց եւ այլ դրքերու, ուսուցանելու համար հայերէնը մարու, ուսուցանելու համար հայերէնը մարու, ինչպէս նաեւ չափահասներուն:

